ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ /ՅՈՒՆԻՍԵՖ/,

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԵՎ

ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ

ՄԻՋԵՎ

ՀՀ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Վանաձոր < __30__ > ապրիլի, 2019թ.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) արտացոլում է կողմերի (այսուհետ՝ Կողմեր) համատեղ համագործակցության ըմբռնումը և համաձայնությունը համայնքային սոցիալական և աղետների ռիսկերի նվազեցման ծրագրերի իրականացման ընթացքում Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2016-2020թթ. Գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում:

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ–ը և Հայաստանի կառավարությունը ճանաչել են 0-6 տարեկան աղջիկների և տղաների և նրանց ընտանիքների իրավունքների իրացման առումով առաջընթացը դեպի որակյալ և վաղ մանկության տարիների ներառական կրթական ծառայություններ, ինչպես նաև խոցելի ընտանիքների կարիքների վրա հիմնված ծառայությունների մշակումը՝ ուղղված խնամք ապահովող, պաշտպանող և դիմակայուն ընտանեկան միջավայրում ապրելու երեխայի իրավունքի իրացմանը, որպես Ծրագրում ամրագրված առանցքային ռազմավարական ծրագրային ոլորտ,

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Հայաստանի կառավարությունը նաև ճանաչել են Ինտեգրված սոցիալական ծառայությունների /ԻՍԾ/ բարեփոխումները, որպես 2019-2020թթ. Երկամյա համատեղ աշխանանքային ծրագրի /ԵՀԱԾ/ հիմնական արդյունք՝ խոցելի ընտանիքների և երեխաների սոցիալական պաշտպանության արդյունավետությունը, մատչելիությունը, համապատասխանությունը և թիրախավորումը՝ բարելավելու ու մարդու սոցիալական անվտանգությունը ապահովելու նպատակով,

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Հայաստանի կառավարությունը ճանաչել են հաշմանդամություն ունեցող աղջիկների և տղաների և նրանց ընտանիքների իրավունքների իրացման առումով առաջընթացը դեպի որակյալ և վաղ մանկության տարիների ներառական, ինտեգրված և կարիքների վրա հիմնված ծառայությունների մշակումը՝ ուղղված համայնքում մատչելի և որակյալ նախադպրոցական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունները ապահովելու, խնամք և պաշտպանող ընտանեկան միջավայրում ապրելու երեխայի իրավունքի իրացմանը, որպես Ծրագրում ամրագրված առանցքային ռազմավարական ծրագրային ոլորտ, ինչպես նաև հիմք ընդունելով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի կառավարության կողմից 2010թ-ին, և որի նպատակն է սատարել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց իրավունքների, հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը, և ներառումը հասարակություն,

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Հայաստանի կառավարությունն ընդունել են երեխաների իրավունքների իրացման համար պետական բյուջետավորման իրականացման կարևորությունը՝ համաձայն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի /ԵԻԿ/ Հոդված 4-ի և համապատասխան ԵԻԿ-ին կից թիվ 19 (2016) Հիմնական դիտարկման, ինչպես նաև Երեխաներին ուղղված պետական ֆինանսների մի շարք

գործողություններ՝ որպես ԵՀԱԾ փաստաթղթերում ամրագրված խաչվող նախաձեռնություններ,

Հաշվի առնելով այն, որ Կողմերը ճանաչել են յուրաքանչյուր երեխայի զարգացման և վաղ կրթության կարևորությունը, հատկապես Հայաստանի մարզերում և առավել խոցելի բնակավայրերում,

Հաշվի առնելով այն, որ Կողմերն ընդունում են Հայաստանում ներկայումս իրականացվող համայնքների խոշորացման վարչա-տարածքային և հանրային կառավարման բարեփոխման գործընթացը՝ որպես երեխայի իրավունքի հետագա իրականացման հնարավորություն կրթության, մասնավորապես վաղ զարգացման և ուսուցման ոլորտում, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտում՝ պահպանելով այդ ջանքերը համապատասխան իրավական, քաղաքական և բյուջետային շրջանակներում,

Հաշվի առնելով այն, որ Կողմերը ընդունում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից Հայաստանում իրականցված 2-6 տարեկան երեխաների համար համայնքահեն ինտեգրված ծառայությունների մոդելը, այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների մոդելը, տեղական/տարածքային սոցիալական պլանավորման մեթոդաբանությունը, տեղական մակարդակում ռիսկի կառավարման մեթոդաբանությունը, դպրոցների և նախադպրոցական հաստատությունների համալիր անվտանգությունը, որպես ընդլայնելի, կիրառելի և արդյունավետ նախաձեռնություններ:

Հիմք ընդունելով փոխադարձ վստահությունը և սերտ համագործակցությունը՝ **Կողմերն այսուհետ համաձայնում** են հետևյալի մասին.

1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1 Սույն Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի իրավունքներն ու պարտականությունները Լոռու մարզի Ալավերդու բազմաբնակավայր համայնքում 0-6 տարեկան երեխաների համար համայնքահեն ինտեգրված ծառայությունների իրականացման ընթացքում, որոնք նկարագրված են մանրամասնորեն սույն Հուշագրի հավելված 1-ում:
1.2 Հուշագրի նպատակն է նաև սահմանել Կողմերի իրավունքներն ու պարտականությունները Լոռու մարզի տարածքային սոցիալական ծրագրի մշակման և Ալավերդու բազմաբնակավայր համայնքում համայնքային սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման համար, ներառյալ ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումները:
1.3 Ապահովել երեխաների անվտանգությունը նախադպրոցական հաստատություններում:
1.4 Հուշագիրը պետք է վերահսկի համայնքահեն ինտեգրված ծառայությունների և համայնքային/տեղական սոցիալական ծրագրերի իրականացման, կառավարման,

ֆինանսավորման, հաշվետվությունների ապահովման և համայնքին հանձնման գործընթացների հետ կապված պարտավորությունների կատարումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերը համաձայնում են իրականացնել իրենց պարտականությունները սույն Հուշագրի դրույթներին համապատասխան և ըստ լիարժեք հաշվետվողականության, թափանցիկության, ներքին կառավարման վերահսկման սկզբունքների և նշված վերահսկողության մեխանիզմների:

2.1.1. ՅՈՒՆԻՍԵՖ-ը համաձայնում է՝

- Համակարգել բոլոր Կողմերի գործողությունները՝ համայնքում 0-6 տարեկան երեխաների համայնքահեն ինտեգրված ծառայությունների և համայնքային/տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում,
- Աջակցել համայնքային/տեղական սոցիալական ծրագրի և ծրագրերի կազմման գործում տարածքային առանձնահատկությունների, տարածքում առկա խնդիրների հաշվառմամբ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ համայնքի (տարածքի) սոցիալական կարիքների գնահատման և հաստատված մեթոդաբանության հիման վրա[1],
- Ապահովել վերահսկողություն, ուղղորդում և փորձագիտական աջակցություն ծրագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև համայնքահեն ինտեգրված ծառայությունների և համայնքային/տեղական սոցիալական ծագրերի մշակման և իրականացման փորձի և գիտելիքների փոխանակում,
- Ապահովել ֆինանսական միջոցների տրամադրումն իրականացնող գործընկեր կազմակերպություններին՝ համաձայն համատեղ մշակված աշխատանքային պլանի, և յուրաքանչյուր ծրագրային արդյունքի հաջող իրագործման նպատակով,
- Հետևել անվտանգության պահպանման հարցերին, և/կամ հաստատել շինարարական նախագծերը, ընտրված տեղամասերը՝ հաշվի առնելով անվտանգության չափորոշիչները, և վերահսկել ընտրված տարածքների վերականգնողական աշխատանքները,
- Աջակցել համայնքում գործող նախադպրոցական հաստատությունների և ծառայությունների համալիր անվտանգության բարելավմանը՝ հաստատության աղետների կառավարման պլանների մշակման և կարողությունների զարգացման միջոցով,

---

[1] ՀՀ տարածքային կառավարման նախարարի 26.12.12 թ. N 178-Ա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 24.12.12թ. N124-Ա/1 համատեղ հրամանի Համայնքի սոցիալական կարիքների գնահատման, դրա հիման վրա սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույց
ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1061-Ն որոշում, Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին

- Մշտադիտարկել և վերահսկել համայնքահեն ինտեգրված ծառայությունների և համայնքային/տեղական սոցիալական ծրագրերի մշակումը, աջակցել ընտրված ծրագրերի իրականացմանը և նպաստել ծրագրերի կայունության ապահովմանը,
- Փաստաթղթավորել առաջընթացը և ապահովել փաստերի վրա հիմնված քաղաքականության իրազեկում համապատասխան նախարարությունների հետ՝ նոր ստեղծված ծառայությունների կայունությունն ապահովելու նպատակով:

2.1.2. Լոռու մարպետարանը համաձայնում է՝
- Համակարգել Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը,
- Վերահսկել ծրագրերի արդյունավետ իրականացումը պլանավորված ժամանակի սահմաններում,
- Մշակել տարածքային սոցիալական ծրագիր, հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները, տարածքում առկա խնդիրները՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ մարզի սոցիալական կարիքների գնահատման և հաստատված մեթոդաբանության հիման վրա,
- Ներառել կամ արտացոլել մշակված տարածքային սոցիալական ծրագիրը մարզի զարգացման Ռազմավարության մեջ,
- Աջակցել միջգերատեսչական, հատկապես՝ սոցիալական, կրթական և առողջապահական օղակների միջև համագործակցությանը Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով,
- Աջակցել Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի կայունության, ներառյալ ֆինանսական ապահովմանը,
- Աջակցել լավագույն փորձի և արդյունքների հանրայնացմանը:

2.1.3. Ալավերդու համայնքը համաձայնում է՝
- Համակարգել համայնքում երեխաների համար համայնքահեն ինտեգրված ծառայությունների զարգացմանն և իրականացմանը վերաբերող բոլոր գործողությունները՝ կենտրոնանալով հատկապես Ալավերդու թիվ 6 մանկապարտեզի վրա, համաձայն սույն Հուշագրին կից Հավելված 1-ի,
- Ապահովել երեխաների համար համայնքահեն ինտեգրված ծառայությունների հետ կապված գույքի/ակտիվների համար պատասխանատու անձանց նշանակումը/ լիազորումը Ալավերդու թիվ 6 մանկապարտեզում,
- Ապահովել նշանակված պատասխանատու անձանց մասնակցությունը երեխաների համար համայնքահեն ինտեգրված ծառայություններին և համայնքային սոցիալական ծրագրերին վերաբերող բոլոր վերապատրաստումներին և հանդիպումներին,
- Տրամադրել համապատասխան միջոցներ Հուշագրի շրջանակներում ընտրված տարածքների վերականգնողական աշխատանքների իրականացման համար՝ համաֆինանսավորման սկզբունքով,
- Լրացնել համայնքային սոցիալական աշխատողի հաստիքը՝ համայնքային բյուջեի ներքո,

- Ձևավորել համայնքային ծրագիրը մշակող հանձնաժողով և աշխատանքային խումբ, ուսումնասիրել համայնքի սոցիալական կարիքները, խնդիրները սահմանել և գնահատել ըստ սոցիալական խմբերի, նկարագրել համայնքում տրամադրվող սոցիալական ծառայությունները, սահմանել և գնահատել ինտեգրված կամ ըստ սոցիալական խմբերի խնդիրների, որոշել ծրագրերի առաջնահերթությունները և իրականացնել համայնքային սոցիալական ծրագիր՝ ներառելով այն համայնքի հնգամյա զարգացման ծրագրում և առաջնորդվելով իրավական ակտերով սահմանված տարածքային սոցիալական ծրագրերի մեթոդաբանությամբ,
- Սահմանել համապատասխան ֆինանսական հատկացումներ համայնքային բյուջեում՝ համայնքային սոցիալական ծրագրերի և համայնքահեն ինտեգրված ծառայությունների արդյունավետ իրագործման նպատակով, մասնավորապես անձնակազմի պահպանման հետ կապված /լրիվ կամ կես դրույքով նեղ մասնագետների, հատուկ մանկավարժների առկայություն/,
- Ապահովել համայնքահեն ինտեգրված ծառայությունների և համայնքային սոցիալական ծրագրերի արդյունավետ գործունակությունն առնվազն հինգ տարի ժամանակահատվածում՝ համայնքային բյուջեում արտացոլված համապատասխան պարտավորությամբ՝ սկսած ծրագրի արդյունքների փաստացի հանձնման պահից, մասնավորապես շարունակական պահպանման և ընթացիկ վերանորոգումների մասով /անհրաժեշտության դեպքում/,
- Ապահովել համայնքում գործող նախադպրոցական հաստատությունների ոչ կառուցվածքային ռիսկերի նվազեցումը և ներառել կառուցվածքային ռիսկերի մեղմացման աշխատանքային պլանը համայնքի հնգամյա զարգացման ծրագրում,
- Գրանցել համայնքահեն ինտեգրված ծառայություններին և համայնքային սոցիալական ծրագրերին վերաբերող հիմնական ակտիվները համայնքի հաշվեկշռում՝ երաշխավորելով տվյալ ակտիվների համայնքային սեփականության իրավունքը /համայնքի ավագանու որոշում համապատասխան ակտիվները համայնքային սեփականության կապիտալ ակտիվների ցանկում գրանցելու և Ալավերդու համայնքին հատկացնելու մասին/,
- Ապահովել միջգերատեսչական, հատկապես՝ սոցիալական, կրթական և առողջապահական օղակների միջև համագործակցությունը Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով,
- Տեղեկացնել Կողմերին ծրագրի իրականացման ընթացքում առաջացող հարցերի/խնդիրների և փոփոխությունների մասին,
- Խթանել և իրազեկել համայնքահեն ինտեգրված ծառայությունների ընդլայնումը այլ բազմաբնակավայր խոշորացված համայնքներում /կլաստերներում/՝ փորձի փոխանակման միջոցով,
- Աջակցել լավագույն փորձի և արդյունքների հանրայնացմանը:

2.2. Կողմերի իրավունքները

2.2.1. Կողմերն իրավունք ունեն ցանկացած ժամանակ տեղեկատվություն ստանալ, ստուգել և բացատրություն պահանջել ցանկացած մյուս Կողմի

պարտականությունների, մատուցվող ծառայությունների ընթացքի և որակի, ինչպես նաև Հուշագրում սահմանված այլ գործողությունների վերաբերյալ՝ համապատասխան սույն Հուշագրի դրույթների և Հավելված 1-ի պահանջների:

2.2.2. Միակողմանի լուծել սույն Հուշագիրը, եթե Կողմերից մեկը էականորեն խախտել է սույն Հուշագրի դրույթները:

2.2.2.1. Խախտումն էական է համարվում, եթե
ա/ մատուցված ծառայությունը կամ գործողությունը չի համապատասխանում սույն Հուշագրի դրույթներին կամ Հավելված 1–ով սահմանված պահանջներին,
բ/ խախտվել են ծառայության մատուցման ժամկետները:

3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Համայնքը կտրամադրի բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ ծրագրի իրականացման ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են ծագել սույն Հուշագրի առնչությամբ, կկարգավորվեն Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Եթե Կողմերը չհասնեն համաձայնության, վեճերը կլուծվեն ՀՀ և/կամ միջազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն Հուշագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում՝ Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Հուշագիրը կնքելուց հետո, և, որը Կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն Հուշագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Հուշագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին կամ Կողմերին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Հուշագիրը կարող է փոփոխվել Կողմերի լիազոր ներկայացուցիչների գրավոր փոխադարձ համաձայնությամբ: Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելուց հետո և ուժի մեջ է մնում, քանի դեռ չի փոփոխվել կամ դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ:

6.2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել սույն Հուշագիրը՝ այլ Կողմերին ներկայացնելով իր գրավոր ծանուցումը երեսուն (30) օր առաջ: Մասնակի դադարեցման դեպքում՝ այդպիսի ծանուցումը պետք է պարունակի դադարեցվող գործունեության ցանկը:

6.3. Ի հաստատում վերոհիշյալի՝ ներքոստորագրյալներս, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցինք սույն Հուշագիրը Վանաձոր քաղաքում, հայերեն և անգլերեն լեզուներով՝ երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լոռու մարզպետարան

Անդրեյ Ղուկասյան

Մարզպետ

Ստորագրություն_____

Ամսաթիվ 30.04.2018

ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան

Տանյա Ռադոչայ

Ներկայացուցիչ

Ստորագրություն_____

Ամսաթիվ 30.04.2018

Ալավերդու խոշորացված համայնք

Սասուն Խեչումյան

Համայնքի ղեկավար

Ստորագրություն_____

Ամսաթիվ 30.04.2018

Հավելված 1. Երեխաների համար համայնքահեն ինտեգրված ծառայությունների ծրագրի ընդհանուր նկարագրություն և իրականացման չափորոշիչներ և պահանջներ

1.1. Համայնքահեն ինտեգրված ծառայությունների համար ընտրված տարածքի նախապատրաստում

Կախված այն բանից, թե համայնքը 2-6 տարեկան երեխաների համար նախատեսված համայնքահեն ինտեգրված ծառայություններ ներդնելու համար ինչ մանկապարտեզ է ընտրում, տարածքը կարող է լինել գործող մանկապարտեզի շենքում գտնվող մեկ մասնաշենքի առաջին հարկը՝ բազմամասնագիտական ծառայություններ տրամադրելու համար նախատեսված սենյակների և խաղասենյակի համար:

1.2. Ընտրված տարածքին ներկայացվող հիմնական պահանջները հետևյալն են.

- բնական և արհեստական լուսավորության առկայություն,
- խմելու ջրի առկայություն կամ հնարավորություն,
- առանձին մուտք կամ երեխաների ելումուտի համար ապահով պայմաններ (առաջին հարկ, ոչ բարձր աստիճաններ, թեքահարթակ, անվտանգ տեղաշարժվելու հնարավորություն և այլն),
- հոսող ջրով ապահովված, զուգարանի առկայություն շենքի ներսում,
- բացօթյա ապահով խաղային տարածքի կամ խաղահրապարակի առկայություն՝ բակային և սպորտային խաղերի համար:

1.3. Երեխաների անվտանգության ապահովում

1.3.1. Համայնքահեն ինտեգրված ծառայության տարածքում երեխաների անվտանգությունը պետք է ապահովված լինի ինչպես շենքի ներսում, այնպես էլ դրսում: Մանկապարտեզում (ներառյալ համայնքահեն ինտեգրված ծառայության տարածքում) գտնվելու ողջ ընթացքում յուրաքանչյուր երեխա պետք է գտնվի դաստիարակի/ հատուկ մանկավարժի տեսադաշտում:

1.3.2. Խաղերը, ուսումնական սարքավորումները և կահույքը չպետք է ունենան սուր անկյուններ, եզրեր, ժանգոտ և չամրացված մասեր: Կահույքը և սարքավորումները պետք է այնպես դասավորված լինեն, որ խաղի ժամանակ երեխաներին չխանգարեն և վնասվածք չպատճառեն:

1.3.3. Էլեկտրական տաքացուցիչները պետք է երեխաների հասանելիությունից դուրս լինեն, և երբեք ոչ մի բաց էլեկտրական լար չպետք է լինի սենյակում:

1.3.4. Շարժական աստիճանները, սահարանները և ճոճանակները պետք է դրված լինեն դրանց համար հատուկ նախատեսված տեղերում: Բոլոր սարքավորումները պետք է լավ տեղադրված, ամրացված և ներկված լինեն: Խաղահրապարակի առկայության պարագայում այն պետք է ծածկված լինի ավազով, խիճով, մանր խոտով կամ էլ ռետինե ծածկով: Թունավոր և փշոտ բույսեր չպետք է աճեն մանկապարտեզի տարածքում:

1.3.5. Համայքահեն ինտեգրված ծառայություններ տրամադրող հատվածը պետք է ունենա արտակարգ իրավիճակների համար տարհանման (էվակուացիայի) պլան և

հասանելի կրակմարիչներ: Հատուկ մանկավարժը/դաստիարակը կամ նշանակված մի այլ մեծահասակ պետք է պատասխանատու լինի երեխաներին տարհանմանը պատրաստելու և արտակարգ իրավիճակներում նրանց առաջնորդելու համար:

1.3.6. Տարածքի մուտքը և ելքը պետք է կողպեքով փակված չլինեն, և ոչ մի խանգարող բան չպետք է լինի մտնելու և դուրս գալու համար:

1.4. Սանիտարահիգիենիկ նորմեր

1.4.1. Համայքահեն ինտեգրված ծառայություններ տրամադրող հատվածը պետք է ապահովված լինի մաքրելու անհրաժեշտ միջոցներով և պարագաներով (ավել, սրբիչներ, խոզանակներ, մաքրող-ախտահանող նյութեր և այլն), որպեսզի երեխաների համար ստեղծված միջավայրը միշտ լինի մաքուր, հիգիենիկ և ապահով առողջության համար:

1.4.2. Սանհանգույցը պետք է լինի մատչելի, երեխայի չափերին համապատասխան, մաքուր, հարմարավետ, հայելիով: Երեխան պետք է այնտեղ ազատ ելումուտ ունենա, կարողանա ինքնուրույն օգտվել դրանից: Զուգարանակոնքերը պետք է լինեն ցածր, երեխայի հասակին համապատասխան, լվացարանները՝ լվացվելու հարմար: Յուրաքանչյուր երեխա պիտի ունենա իր անհատական սրբիչը և բաժակը: Ե՛վ սանհանգույցում, և՛ խմբասենյակում փակ աղբամաններ պիտի լինեն:

1.4.3. Հանդերձարանը կարող է խմբասենյակի մաս կազմել կամ առանձին սենյակում լինել: Կոշիկների տեղը կարող է անհատական պահարանում լինել:

1.5. Համայնքահեն ինտեգրված ծառայություններ տրամադրող աշխատակազմի (հատուկ մանկավարժների/դաստիարակների և նեղ մասնագետների) ընտրություն և վերապատրաստում

1.5.1. Ընտրվող հատուկ մանկավարժներին/դաստիարակներին, հատուկ մանկավարժների օգնականներին և նեղ մասնագետներին ներկայացվող որակավորման պահանջներն են՝

Համայնքահեն ինտեգրված ծառայության հատուկ մանկավարժը/դաստիարակը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին հինգ տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

Բացի վերոհիշյալից, թեկնածուներին առաջադրվող պահանջները, ներառում են նաև խոսքի գրագիտություն, մասնակցություն համայնքում իրականացվող այլ ծրագրերին, երեխաների և ծնողների հետ աշխատելու մոտիվացիա, համայնքում ունեցած բարձր վարկանիշ և այլն:

1.5.2. Ընտրվող նեղ մասնագետներին (ֆիզիկական թերապիստ, հոգեբան, էրգոթերապիստ, լոգոպեդ) ներկայացվող որակավորման պահանջներն են՝

Համայնքահեն ինտեգրված ծառայության նեղ մասնագետները (ֆիզիկական թերապիստ, հոգեբան, էրգոթերապիստ, լոգոպեդ) պետք է ունենան՝ համապատասխան մասնագիտական բազային կրթություն՝ համապատասխան որակավորմամբ, ցանկալի է

նաև վերջին հինգ տարվա ընթացքում երեք տարվա աշխատանքային փորձ երեխաների հետ:

1.5.3. Հատուկ մանկավարժների/դաստիարակների, նեղ մասնագետների վերապատրաստում, որն իրականացվում է փուլերով: Աշխատանքը պետք է ընդգրկի կենտրոնացված վերապատրաստումներ և տեղերում անհատական մասնագիտական խորհրդատվություն: Վերապատրաստումներն անցկացնելիս պետք է հիմնվել դաստիարակի ուղեցույցների վրա՝ «Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ» և «Փոքր համայնքներում այլընտրանաքային ծառայությունների կազմակերպումը 3-6 տարեկան երեխաների համար»:

1.5.4. Հատուկ մանկավարժները/դաստիարակները պետք է ընտրվեն այն բնակավայրից, որտեղ իրականացվում է համայնքահեն ինտեգրված ծառայությունները: